կառակորդները, առ այժմ չունինք վոր և է ցույցում խնդիրը պարզելու։

Դավթի առաջին գործն եր պարտքերը վճարել և ճանապարհները հարթել. իսկ յերկրորդ տարին շինություններով զբաղվել։ Այդ ժամանակ մեռնում է Հակոբ կաթուղիկոսը Կ. Պոլսում և տեղապահ Միքայել վարդապետը Շամբի ձորի ս. Ստեփանոսի վանքում. հայրապետական աթոռը մի տարի անտեր է մնում, մինչև վոր արևելյան վարդապետները համաձայնության են գալիս և Գողթնյաց Պետրոս յեպիսկոպոսին հրավիրակ են ուղարկում Յեղիազար Անթապցու մոտ, գալու և շարունակելու յուր կաթուղիկոսությունը Եչմիածնում։ Յեղիազարը հայրապետական գահն է նստում «ի թուոջ հայոց ՌՃԼԱ, յաւուր վերափոխման սր Աստծնի կիրակին», յերկրորդ տարին՝ ՌՃԼԲ (=1683) թվի առաջավորի բարեկենդանի կիրակին Դավթին վարդապետական գավազան և տալիս և հետևյալ կիրակին յեպիսկոպոս ձեռնադրում «ի վր իւր սեպհական տանն Գեղարդի, կոնդակաւ և իշխանութեամբ լինիլ ի վր թեմի և վիճակին»։ Այնուհետև բուռն կերպով անձնատուր է լինում յուր վանքի վերաշինության գործին. շինելով վանքի պարիսպը, «նաև շինուածք բոլորակի, թանապայք, քոշք, ապարանք, սենեկք, խահարանոցք և այլ ամ շտեմրնք, տաշել քարով, կրով և թաղով»։

Հիշատակարանի հեղինակը պատմում է նաև 1687 թվին շինել տված Գեղարդի պահարանի մասին. «շինեց զտուի զուիթի արծաթէ պահարանս ածամուխ գեղարդի նշանի, և ակամբք պատուականօք յօրինել ետ և ոսկւով ջրեց. բզմ ծախս գնաց, մինչ Իե թուման ավելի և ոչ պակաս»։ Պահարանի գեղարվեստական արժեքի մասին գաղափար են տալիս նկ. 112, 113 և 114։ Հետևի արձանագրությունը (նկ. 28) պարզում է նորա ծագման հանգամանքները. յերկարությունն է 56 սմ., լայնությունը՝ 24, իսկ հաստությունը, կողը (նկ. 114) $5^1/_2$ սմ.։ Առաջին նկարը պահարանի յերեսն է, ծածկված յերկփեղկ դռնով, ներքևի մասը ուղիղ անկյուններով, իսկ վերևը կտրված կամ սուր աղեղով։ Դռնակների վերա վերին տեսարանը Ավետումն է. հրեշտակը աջից (նայողի ձախ կողմից) մոտենում է կույսին, վոր ձեռքին սափոր ունի բռնած, մանկության անվավեր ավետարանի համաձայն. ներքևի տեսարանը խաչելությունն է, աջից Հովհաննես և ձախից Մարիամ, յերկուսն էլ ձեռքները կրծքին դրած։ Խաչելության դիմաց մյուս դռնակի վերա յեղած յերկարազգեստ նիմբուսով պատկերը, աջին խաչ և ձախին հովվական գավազան, կարծում ենք, Լուսավորիչն է բարեխոսի դերում*։ Գրիգոր և Սարգիս վոսկերիչները ֆիգուրներին չեն կարողացել տալ հարկավոր չափով կենդանություն. դեմքերը նիհար են և ասկետական դրոշմը զորեղ, թեև շարժումները և կեցվածքը վոչ զուրկ բնականությունից։ Դռնակների մակերևույթը, պատկերներից վեր և վար, ծածկված են բուսական զարդարանքներով։ Նկար 113 նույն պահարանի բացված տեսարանն է. մեջտեղում յերկաթի նիզակը կամ գեղարդը, դաշտը և դռնակների յերեսները զարդարված բուսական զարդարանքներով. նույն կերպով զարդարված են և կողերը (պատկ. 113)։ Իսկ հետևի արձանագրությունը, վորի մասին (նկ. 28. Հավել. Ա. 15),

Գեղարդի պահարան. **Պատկեր 112.**

քանիցս առիթ ենք ունեցել հիշելու և ոգտագործելու, յերկու մասից եր բաղկացած. առաջին մասը Պող մեծի շինել տված պահարանի արձանագրության պատճենն է, իսկ յերկրորդ մասը ներկա նորոգության*։

Սույն Հայսմավուրքի հիշատակարանի համեմատ Դավթի փոքրի որով պայծառ և փառավոր եր վանքը, յեկեղեցիները լի «ամ զահօք և պաշտօնատարօք, և

* Տես. յեր. 193 այս գրքի մեջ։

* Տես յեր. 98, 104, 137, 183 և 255։